ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հրատարակման ենթակա են միայն այն գիտական աշխատանքները, որոնք համապատասխանում են Կրթահամալիրի կողմից սահմանած պայմաններին և պահանջներին:

Ներկայացվող նյութերը հրատարակվում են վճարովի՝ մինչև 15 էջ ծավալով նյութի համար՝ 15 000 դրամ, իսկ յուրաքանչյուր լրացուցիչ էջի համար՝ 1 500 դրամ: Վճարումը կատարվում է հոդվածը տպագրության երաշխավորելու մասին որոշման վերաբերյալ հեղինակին տեղեկացնելուց հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ Կրթահամալիրի 900018005018 հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

Վճարումներն իրականացվում են անկանխիկ եղանակով: Վճարումը կատարելուց հետո հեղինակը՝

- ✓ վճարումը հավաստող փաստաթուղթը (անդորրագիր կամ փոխանցման հաստատում),
- ✓ իր անձնագրային տվյալները,
- ✓ հանրային ծառայության համարանիշը,
- ✓ գրանցման հասցեն

ներկայացվում է Կրթահամալիր՝ առձեռն կամ gitratarakutyunner@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեին:

Կրթահամալիրի ղեկավար, վարչական և պրոֆեսորադասախոսական անձնակազմի, ասպիրանտների, սովորողների, ՆԳՆ աշխատողների, Կրթահամալիրի հետ համագործակցության պայմանագիր ունեցող արտասահմանյան երկրների ուսումնական հաստատությունների ներկայացուցիչների և Գիտական հրատարակությունների խմբագրական խորհրդի անդամների կողմից հեղինակած նյութերը հրատարակվում են անվճար: Գլխավոր խմբագրի որոշմամբ կարող է անվճար հրատարակվել նաև այլ հեղինակների աշխատություններ: